Հաստատված է

«Արմենիա Թի-Վի» փակ բաժնետիրական ընկերության

02 մարտի 2004թ-ին կայացած բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում

արձանագրություն թիվ 3

գլխավոր տնօրեն

Դավիթ [illegible]

Տպագրված է ընդամենը 4 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 23.07.1998թ.-ին

Գրանցման թիվ. 273.120.02354

Վկայական թիվ. 01Ա 042237

Թիվ 5/3 փոփոխությունը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Նորք-Մարաշի տարածքային բաժնի կողմից «09» 03 2004թ.

պետ Ռ. [illegible]

«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

«Արմենիա Թի-Վի» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ կերպ.

Հոդված 5. Ընկերության կանոնադրական կապիտալը

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 578,462,000 (հինգ հարյուր յոթանասունութ միլիոն չորս հարյուր վաթսուներկու հազար) դրամ, որը կազմված է 446 (չորս հարյուր քառասունվեց) սովորական բաժնետոմսերից, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1.297.000 (մեկ միլիոն երկու հարյուր իննսունյոթ հազար) դրամ:

«Արմենիա Թի-Վի» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 6-րդ հոդվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ կերպ.

Հոդված 6. Ընկերության բաժնետոմսերը

3. Ընկերությունը կարող է թողարկել եւս 1,500 (հազար հինգ հարյուր) սովորական բաժնետոմս: Բաժնետոմսերի տեղաբաշխման կարգը սահմանվում է Ընկերության ներքին կանոնակարգող փաստաթղթերով և/կամ բաժնետերերի միջև կնքված պայմանագրով:

Հաստատված է

«Արմենիա Թի-Վի» փակ բաժնետիրական ընկերության

12 մարտի 2004թ-ին կայացած բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում

արձանագրություն թիվ 4.

գլխավոր տնօրեն

Դավիթ Մարգարյան

Տպագրված է ընդամենը 4 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 23.07.1998թ.-ին

Գրանցման թիվ. 273.120.02354

Վկայական թիվ. 01Ա 042237

Թիվ 6/3 փոփոխությունը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Նորք-Մարաշի տարածքային բաժնի կողմից «19» 03 2004թ.

պետ՝ Հ. Գևորգյան

«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

«Արմենիա Թի-Վի» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ կերպ.

Հոդված 5. Ընկերության կանոնադրական կապիտալը

Ընկերությունը կանոնադրական կապիտալը կազմում է 861,208,000 (ութ հարյուր վաթսունմեկ միլիոն երկու հարյուր ութ հազար) դրամ, որը կազմված է 664 (վեց հարյուր վաթսունչորս) սովորական բաժնետոմսերից, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1.297.000 (մեկ միլիոն երկու հարյուր իննսունյոթ հազար) դրամ:

Հաստատված է

«Արմենիա Թի-Վի» փակ բաժնետիրական ընկերության

01 հուլիսի 2002թ-ին կայացած բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում

արձանագրություն թիվ 15

գլխավոր տնօրեն՝

Դավիթ Սարգսյան

Գրանցված է

ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում

Գրանցման թիվ. 273.120.02354

Վկայական թիվ. 01Ա 042237

Փոփոխություն թիվ. 4 16.07.2002թ

ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Մյասնիկյանի տարածքային բաժնի

պետ՝ Հ. Գևորգյան

«___» _____ 2002թ.

«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ թիվ. 4

ԵՐԵՎԱՆ 2002

Շարադրել «Արմենիա Թի-Վի» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության հոդված 5-ը հետևյալ կերպ.

<u>Հոդված 5. Ընկերության կանոնադրական կապիտալը</u>
Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 402.070.000 (չորս հարյուր երկու միլիոն յոթանասուն հազար) դրամ, որը կազմված է 310 (երեք հարյուր տասն) սովորական բաժնետոմսերից, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1.297.000 (մեկ միլիոն երկու հարյուր իննսունյոթ հազար) դրամ:

Հաստատված է

«Արմենիա Թի-Վի» փակ բաժնետիրական ընկերության

20 մարտի 2005թ-ին կայացած բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում

արձանագրություն թիվ 24.

տնօրեն

Գագիկ Մկրտչյան

Տպագրված է ընդամենը 6 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 23.07.1998թ.-ին

Գրանցման թիվ. 273.120.02354

Վկայական թիվ. 01Ա 042237

Թիվ 7/3 փոփոխությունը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Նորք-Մարաշի տարածքային բաժնի կողմից

«13» 04 2005թ.

պետ՝

«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

«Արմենիա Թի-Վի» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4-րդ հոդվածի 1-ի կետը և 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ կերպ.

Հոդված 4. Ընկերության գտնվելու վայրը, մասնաճյուղերը և ներկայացուցչությունները:

1. Ընկերության հասցեն է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 375054, Եղվարդի խճուղի թիվ 1:

Հոդված 5. Ընկերության կանոնադրական կապիտալը

Ընկերությունը կանոնադրական կապիտալը կազմում է 1,024,630,000 (մեկ միլիարդ քսանչորս միլիոն վեց հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, որը կազմված է 790 (յոթ հարյուր իննսուն) սովորական բաժնետոմսերից, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1.297.000 (մեկ միլիոն երկու հարյուր իննսունյոթ հազար) ՀՀ դրամ:

Հաստատված է
«Արմենիա Թի-Վի»
փակ բաժնետիրական ընկերության
բաժնետերերի 18 ապրիլի 2001թ.
կայացած
ընդհանուր ժողովում
արձանագրություն թիվ. 14

Գլխավոր տնօրեն՝ Դ. Սարգսյան

Գրանցված է
ՀՀ ֆեռնարկությունների
պետական ռեգիստրի կողմից
Գրանցման թիվ. 873120002354
Վկայական թիվ. 01Կ 042237
Փոփոխություն
թիվ. 3
Գրանցման օրը 27-04-2001թ.

Պետական Ռեգիստրի Երևանի
Մյասնիկյանի տարածքային բաժնի
պետ՝

«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(նոր խմբագրությամբ)

ԵՐԵՎԱՆ 2001

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

«Արմենիա Թի-Վի» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) հիմնադրվել է ՀՀ օրենսդրության համաձայն:

Հոդված 2. Ընկերության անվանումը

1. *Ընկերության լրիվ անվանումն է՝*

   Հայերեն՝ «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» փակ բաժնետիրական ընկերություն:

   Ռուսերեն՝ Акционерное Общество Закрытого Типа "АРМЕНИЯ ТИ-ВИ".

   Անգլերեն՝ "ARMENIA TV" Closed Joint-Stock Company.

2. *Ընկերության կրճատ անվանումն է՝*

   Հայերեն՝ «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ:

   Ռուսերեն՝ "АРМЕНИЯ Ти-Ви" АОЗТ.

   Անգլերեն՝ **"ARMENIA TV" CJSC.**

Հոդված 3. Ընկերության իրավական կարգավիճակը

1. *Ընկերությունը փակ բաժնետիրական ընկերություն է.*
2. *Ընկերությունը ունի կնիք (կազմակերպության նշանով, եթե այդպիսի որոշում ընդունի բաժնետերերի ընդհանուր ժողովը), դրոշմ, ապրանքանշան եւ իրավաբանական անձին հատուկ այլ ռեկվիզիտներ.*
3. *Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած գործունեություն:*

Հոդված 4. Ընկերության գտնվելու վայրը, մասնաճյուղերը եւ ներկայացուցչությունները

1. *Ընկերության հասցեն է Հայաստանի Հանրապետություն, ք. Երեւան, Սարալանջի 1:*
2. *Ընկերությունը չունի մասնաճյուղեր եւ ներկայացուցչություններ:*

Հոդված 5. Ընկերության կանոնադրական կապիտալը

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 310 000 000 (երեք հարյուր տաս միլիոն) դրամ, որը կազմված է 310 (երեք հարյուր տաս) սովորական բաժնետոմսերից, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1 000 000 (մեկ միլիոն) դրամ:

Հոդված 6. Ընկերության բաժնետոմսերը

1. *Ընկերությունը թողարկում է սովորական անվանական բաժնետոմսեր, որոնք տեղաբաշխվում են ոչ տպագրական եղանակով՝ Ընկերության ռեեստրում բաժնետիրոջ անձնական հաշվում գրանցման տեսքով:*
2. *Ընկերությունը, բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից սահմանված կարգով, իրավունք ունի միաձուլել (կոնսոլիդացնել) իր թողարկած (տեղաբաշխված) բաժնետոմսերը՝ ավելացնելով դրանց անվանական արժեքը կամ դրանք բաժանել ավելի փոքր անվանական արժեքի բաժնետոմսերի:*
3. *Ընկերությունը կարող է թողարկել եւս 310 (երեք հարյուր տասս) սովորական բաժնետոմս: Բաժնետոմսերի տեղաբաշխման կարգը սահմանվում է Ընկերության ներքին կանոնակարգող փաստաթղթերով եւ/կամ բաժնետերերի միջեւ կնքված պայմանագրով:*
4. *Ընկերության կարող է փոքրացնել կանոնադրական կապիտալը բաժնետոմսերի ձեռքբերման եւ մարման միջոցով:*

Հոդված 7. Բաժնետերերի իրավունքները

1. *Ընկերության յուրաքանչյուր բաժնետիրոջ իրավունքները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, Ընկերության ներքին կանոնակարգող փաստաթղթերով եւ/կամ բաժնետերերի միջեւ պայմանագրով: Ընկերության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միեւնույն իրավունքները:*
2. *Ընկերության բաժնետերերի կողմից Ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքը սահմանվում է Ընկերության ներքին կանոնակարգող փաստաթղթերով եւ/կամ բաժնետերերի միջեւ պայմանագրով:*
3. *Ընկերության բաժնետերերը իրավունք ունեն ստանալ ընկերության գործունեության մասին տեղեկություններ համաձայն Ընկերության ներքին կանոնակարգող փաստաթղթերի եւ/կամ բաժնետերերի միջեւ պայմանագրի:*
4. *Ընկերության բաժնետերերը իրավունք ունեն ստանալ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին ծանուցում այդ ժողովը անցկացվելուց նվազագույնը 48 (քառասունութ)ժամ առաջ:*
5. *Ընկերության բաժնետերերն ունեն 15 (տասնհինգ) օրվա ընթացքում կանոնադրական հիմնադրամում իրենց բաժնին համապատասխան նոր բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունք:*

Հոդված 8. Բաժնետոմսերի դիմաց վճարումները

Ընկերության բաժնետոմսերի եւ արժեթղթերի համար վճարումների կարգը եւ ձեւը սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ եւ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

Հոդված 9. Պահուստային կապիտալ

Պահուստային կապիտալը կազմվում է օրենքով սահմանված նվազագույն չափով, եթե բաժնետերերի ընդհանուր ժողովը ավելի բարձր չափ չսահմանի:

Հոդված 10. Կառավարման մարմիններ

Ընկերությունն ունի կառավարման հետևյալ մարմինները՝

- *բաժնետերերի ընդհանուր ժողով.*
- *գործադիր մարմին՝ գլխավոր տնօրեն.*
- *վերստուգող հանձնաժողով:*

Հոդված 11. Բաժնետերերի ընդհանուր ժողով

1. *Բաժնետերերի ընդհանուր ժողով կազմակերպելու եւ անցկացնելու կարգը սահմանվում է Ընկերության ներքին կանոնակարգող փաստաթղթերով եւ/կամ բաժնետերերի միջեւ պայմանագրով:*
2. *Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը հրավիրման կազմակերպական խնդիրները այդ թվում օրակարգի հաստատումը դրվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կազմակերպող հանձնաժողովի վրա, որը կազմվում է համաձայն Ընկերության ներքին կանոնակարգող փաստաթղթերի եւ/կամ բաժնետերերի միջեւ պայմանագրի:*

Հոդված 12. Բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունները

1. *Բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ եւ/կամ Ընկերության ներքին կանոնակարգող փաստաթղթերով:*
2. *Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը ունի նաեւ ՀՀ օրենսդրությամբ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի համար սահմանված իրավասությունները:*

Հոդված 13. Բաժնետերերի ընդհանուր ժողովի քվորումը եւ որոշումների ընդունումը

1. *Բաժնետերերի ընդհանուր ժողովը իրավասու է եթե մասնակցող բաժնետերերը համատեղ տիրապետում են Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմերի 50-ից (հիսուն) ավել տոկոսի:*
2. *Բաժնետերերի ընդհանուր ժողովում որոշումներ ընդունելու համար անհրաժեշտ է ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների 50 (հիսուն) տոկոսից ավելին, եթե ձայների առավել քանակ նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ, Ընկերության ներքին*

2. Բաժնետերերի ընդհանուր ժողովում որոշումներ ընդունելու համար անհրաժեշտ է ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների 50 (հիսուն) տոկոսից ավելին, եթե ձայների առավել քանակ նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ, Ընկերության ներքին կանոնակարգող փաստաթղթերով եւ/կամ բաժնետերերի միջեւ պայմանագրով:
3. Ընդհանուր ժողովը նախագահում է Ընկերության գլխավոր տնօրենը, եթե ընդհանուր ժողովը այլ բան չի որոշում: Ժողովի նախագահողը չունի վճռող ձայնի իրավունք:
4. Բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է անցկացվել նաեւ հեռահաղորդակցությամբ: Ընդհանուր ժողովը կարող է ընդունել որոշումներ նաեւ առանց ժողով հրավիրելու բաժնետերերի գրավոր միաձայն համաձայնությամբ:

Հոդված 14. Ընկերության գործադիր մարմինը

1. Ընկերության գործադիր մարմինը կազմված է գլխավոր տնօրենից եւ իր անձնակազմից:
2. Ընկերության գործադիր մարմինն իրավասու է որոշումներ կայացնել ընկերության ամենօրյա ղեկավարման հետ կապված բոլոր այն հարցերի վերաբերյալ, որոնք չեն գտնվում բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության ներքո:
3. Գլխավոր տնօրենին նշանակում եւ նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնում է բաժնետերերի ընդհանուր ժողովը:

Հոդված 15. Ընկերության վերստուգող հանձնաժողով

Վերստուգող հանձնաժողովը ընտրվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից երեք տարով եւ կազմված է օրենքով այդ հանձնաժողովի համար սահմանված նվազագույն թվով անդամներից, եթե այլ բան չի նախատեսված Ընկերության ներքին կանոնակարգող փաստաթղթերով եւ/կամ բաժնետերերի միջեւ պայմանագրով:

Հոդված 16. Ընկերության կանոնադրության փոփոխությունները

Սույն կանոնադրության փոփոխություններն ու լրացումները կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը պետք է հաստատվի բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկա ձայների երեք քառորդով(3/4):